ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԽՄԲԱԳԻՐԸ, ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

(Անուշավան Զաքարյանի ծննդյան 55-ամյակի առթիվ)

Լրացավ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ-պատասխանատու քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանի ծննդյան 55-ամյակը: Ճանաչված գրականագետի, խմբագրի, հրատարակչի կյանքի անցած ուղին հիմնականում կապված է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի հետ. խմբագրական-հրատարակչական, գիտական բնագավառներում նա իր մկրտությունը ստացել է գիտության հենց այս կաճառում, որտեղ էլ արգասաբեր աշխատում է շուրջ 30 տարի:

Ան. Զաքարյանը ծնվել է 1954 թ. հունվարի 1-ին Նախիջևանի ԻԽՍՀ Օրդուբադի շրջանի Փառակա գյուղում, ծառայողի ընտանիքում: Վաղ հասակից փոխադրվելով Երևան՝ 1961-ին ընդունվել և 1971 թ. ավարտել է Երևանի Ն. Կ. Կրուպսկայայի (այժմ՝ Նիկոլ Աղբալյանի) անվան -19 միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը. ինստիտուտը դեռ չավարտած՝ գործուղվել է Հոկտեմբերյանի շրջանի Նոր Արտագերս գյուղի միջնակարգ դպրոցում դասավանդելու: Ան. Զաքարյանը կարող էր շատերի պես մնալ այդ «տաքուկ» անկյունում, աշխատել մինչև զինակոչային տարիքի լրանալը, սակայն իր խառնվածքին հատուկ հաստատակամությամբ որոշեց կատարել իր պարտքը և 1975–1976 թթ. Հեռավոր Արևելքում՝ Խաբարովսկի երկրամասի Օբլուչիե քաղաքում որպես շարքային ծառայեց բանակում:

Լայն ու ընդգրկուն է Ան. Զաքարյանի կենսագործունեության ոլորտը. խմբագրական-հրատարակչական աշխատանք, պետական ծառայություն, գիտահետազոտական գործունեություն: Աշխատանքային բուն կենսագրությունը նա սկսել է 1977 թ., երբ աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունում որպես խմբագիր: Կարճ ժամանակահատվածում՝ նաև իր ավագ գործընկերների ջանադիր օգնությամբ՝ տիրապետելով խմբագրական-հրատարակչական ուրույն աշխատանքի նրբություններին՝ խմբագրեց երկու տասնյակից ավելի գիտական ուսումնասիրություններ ու մենագրություններ: Եվ պատահական չէր, որ,

նկատելով Ան. Զաքարյանի անուրանալի այս արժանիքը, Գիտությունների ակադեմիայի ավագագույն՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր, անվանի պատմաբան, հետագայում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Միքայելյանը շատ շուտով՝ 1980 թ. հունվարին, նրան աշխատանքի հրավիրեց ամսագրի խմբագրություն՝ իբրև պատասխանատու քարտուղար: Հասունանալով այդ միջավայրում, խորանալով գիտական-գործնական-կազմակերպչական հիմնահարցերի մեջ՝ Ան. Զաքարյանն իր նպաստը բերեց դրանց լուծմանը: Գիտական հանրությունը նրան ճանաչեց որպես գրագետ, կիրթ, սկզբունքային, լայն մտահորիզոնի տեր անձի: Շուրջ 13 տարի նա եղել է այս ամսագրի պատասխանատու քարտուղարը:

Ազգային զարթոնքի տարիներին՝ 1989–1990 թթ., Ան. Զաքարյանը վարել է նաև «Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության «Գոյամարտ» շաբաթաթերթի պատասխանատու քարտուղարի պաշտոնը՝ միաժամանակ լինելով ակտիվ հեղինակ:

1993 թ. հոկտեմբերից Ան. Զաքարյանն աշխատանքի է փոխադրվել ՀՀ Գերագույն խորհրդի աշխատակազմ որպես հրատարակչական բաժնի վարիչ: Այստեղ ևս փայլուն դրսևորվեցին նրա՝ խմբագրական-հրատարակչական գործի հմուտ կազմակերպչի կարողությունները. կարճ ժամանակահատվածում նա կարողացավ կարգավորել Գերագույն խորհրդի տարիներով կուտակված նստաշրջանների նիստերի և ընթացիկ նիստերի նյութերի՝ սեղմ ժամկետներում և ընդունված սկզբունքներով սղագրումը, նոր շունչ հաղորդեց ԳԽ տպարանի աշխատանքներին, մասնավորապես հայերեն ու ռուսերեն հրատարակվող Գերագույն խորհրդի տեղեկագրերը սահմանված ժամանակում հենց այս տպարանում հրատարակելու առումով:

1995 թ. հոկտեմբերից Ան. Զաքարյանը ղեկավարել է Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներ. եղել է արձանագրային-հրատարակչական բաժնի վարիչի տեղակալ, գրասենյակի ղեկավար, քարտուղարության պետի տեղակալ:

Ան. Զաքարյանի կազմակերպչական և գործնական աշխատանքը լիուլի դրսևորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի նորաստեղծ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրեն աշխատելու կարճ ժամանակահատվածում (1998 թ.): Այնուհետև աշխատանքային գործունեությունը նա կրկին շարունակել է Ազգային ժողովի աշխատակազմում. 2000 թվականից ԱԺ աշխատակազմի հրատարակչական բաժնի վարիչն է: Նրա անմիջական ղեկավարությամբ են ստեղծվել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով» (երկրորդ և երրորդ գումարումներ) մեծածավալ, պատկերազարդ, եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գրքերը, մի հրատարակություն, որն իր նախընթացը չի ունեցել մեզանում:

Գիտությունների ազգային ակադեմիայի հետ Ան. Զաքարյանի կապերը այս ընթացքում չընդհատվեցին. 1999 թ. նա ստանձնեց ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» պատասխանատու քարտուղարի, 2003-ից՝ նաև գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոնը: Տեղին է նշել, որ վերը թվարկված բոլոր պարբերականների գիտա-

կան, հասարակական-քաղաքական, մշակութային արժեքը, դրանց բովանդակության արդիականությունը, գիտակազմակերպչական աշխատանքները պատշաճ մակարդակի բարձրացնելու գործում մեր գործընկերն ունի անուրանալի ավանդ:

Ան. Զաքարյանը մեծ ներդրում ունի նաև գիտության ասպարեզում: Գիտահետազոտական ու վերլուծական անվիճելի կարողությունները, աղբյուրագիտական խոր գիտելիքները, արխիվային հարուստ նյութերի իմացությունը ապահովել են նրա գիտական հետաքրքրությունների լայն շրջանակը: Ան. Զաքարյանի գիտական հետազոտություններն ամփոփված են 8 մենագրությունում ու կազմած ժողովածուներում և 110-ից ավելի հոդվածներում ու հրապարակումներում: Դրանք ընդգրկում են հայ-ռուս պատմամշակութային փոխհարաբերությունների լայն շրջանակ, XX դարասկզբի հայ իրականության, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության առավել քիչ ուսումնասիրված հիմնախնդիրների լուսաբանում: Այստեղ հարկ է հատուկ նշել, որ Ան. Զաքարյանն իր գիտական ուսումնասիրությունները կատարել է հիմնական աշխատանքին զուգընթաց, որն ավելի է կարևորում նրա կատարած գործի արժեքը:

Գիտության մեջ նոր ոտք դրած երիտասարդը հետազոտության թեմա ընտրեց ռուս-հայ պատմամշակութային կապերը, մասնավորապես XX դ. 10-ական թվականներին՝ մեր ժողովրդի պատմության համար բախտորոշ տարիներին: Նրա գիտական սկզբնական շրջանի գործունեությունը վերաբերում է հենց այդ ժամանակահատվածի պատմության՝ մինչ այդ անհայտ կամ քիչ հետազոտված հարցերի ուսումնասիրությանը: Այս առումով անուրանալի են Ան. Զաքարյանի ծառայությունները մեզանում հայ-ռուս գրապատմական իրողությունները նոր շեշտադրումներով և խորքային վերլուծություններով ուսումնասիրելու գործում: 1985 թ. նա պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը» խորագրով, իսկ 2005 թ. «Ռուս գրագետները և հայ իրականությունը (XX դարի 10-ական թվականներ)» թեմայով պաշտպանեց դոկտորական ատենախոսություն: Ուսումնասիրելով, հայտնաբերելով ու գիտական շրջանառության մեջ դնելով պատկառելի քանակությամբ արխիվային նոր վավերագրեր ու մամուլի տվյալներ՝ նա մոռացության մշուշից հանեց և ընթերցող լայն հասարակությանը ծանոթացրեց ռուս գրական-հասարակական, ռազմական գործիչների մի աստղաբույլի՝ Անտուան Բերեզովսկի-Օլգինսկու, Վյաչեսլավ Պոլոնսկու, Վասիլի Վոդովոզովի, Ալեքսանդր Կուլեբյակինի, Արիադնա Տիրկովայի, Սերգեյ Գորոդեցկու, Վալերի Բրյուսովի, Բորիս Լազարևսկու, Սերգեյ Ռաֆալովիչի, Պյոտր Սիբիրցևի և այլոց, Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում ծավալած հայանպաստ բուռն գործունեության մանրամասներին: Դրանք իրենց արտահայտությունը գտան, բազմակողմանիորեն լուսաբանվեցին Ան. Զաքարյանի ոչ միայն թեկնածուական ու դոկտորական վերը նշված ատենախոսություններում, այլև նրա մյուս աշխատություններում ևս՝ «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920 թթ.)» (1984 թ.), «Ռուս գրագետները և հայ իրականությունը» (XX դ. 10-ական թվականներ)» (1994, ռուս.), «Ալեքսանդր Կուլեբյակինը և Հայաստանը» (2003, ռուս.), «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրական գործիչների

գնահատությամբ» (2003 թ., ռուս.), «Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին» (2004 թ.) արժեքավոր մենագրություններում, բազմաթիվ հոդվածներում ու հրապարակումներում:

Այս աշխատությունները լուրջ ներդրում են հայ ժողովրդի պատմության բախտորոշ և ողբերգական ժամանակաշրջանի հայ-ռուս գրական-պատմական-մշակութային առնչությունների համակողմանի ուսումնասիրության ու նորովի լուսաբանման բնագավառներում: Իր գիտական այս վաստակով էլ նա, իրավամբ, համարվում է հայ-ռուս գրական, պատմամշակութային կապերի մերօրյա նշանավոր մասնագետներից մեկը: Ան. Զաքարյանի կատարած աշխատանքը կարևորվում է հետևյալ առումով. բազմակողմանի գիտելիքները, լայնախոհությունը, վերլուծական սթափ միտքը, ճշգրիտ եզրակացությունների հանգելու կարողությունները հնարավորություն են ընձեռել ուսումնասիրվող հիմնախնդիրներին անդրադառնալ նոր հարցադրումներով ու թարմ դատողություններով: Վերը թվարկված նրա աշխատությունները շարադրված են հայրենասիրության և Ռուսաստանի հետ բարեկամության ամուր դիրքերից, պատմության տրամադրած հարուստ փաստերով և կուռ տրամաբանությամբ ներկայացված են հայ ժողովրդի՝ ռուս պետականության ու ժողովրդի հետ ունեցած ավանդական կապերի և հարաբերությունների հիմքերը: Միաժամանակ, լինելով պատմական ճշմարտության և հարազատ ժողովրդի ազգային շահերի նվիրյալը, Ան. Զաքարյանը հիմնավոր փաստարկումներով մերկացնում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականությունը: Հետազոտողն իրավացիորեն նշելով այդ քաղաքականության երկդիմի բնույթը, մասնավորապես երկյուղը ազգային-ազատագրական պայքարի դրսևորումներից, իր ուսումնասիրությունների հիմքում դնում է պատմական-հասարակական-քաղաքական-գրական-մշակութային իրողությունների գնահատումը «կոնկրետ իրադրության» հաշվառմամբ կատարելը: Ընդհանրապես, Ան. Զաքարյանի գլխավոր «գենը» նոր փաստերն ու փաստաթղթերն են, որոնք էլ նրա ուսումնասիրությունների հիմքն են: Մեզանում տարածված է անքննադատ հավատը հայտնաբերված նոր փաստաթղթերին, հուշերին, հիշատակումներին: Արձանագրելով իբրև Ան. Զաքարյանի կատարած աշխատանքի նոր արժանիք արխիվային բազմաթիվ նորահայտ և ուշագրավ նյութերի հայտնաբերումն ու տեղին օգտագործումը, անհրաժեշտ է նշել հիշյալ բնույթի նյութերի օգտագործման հեղինակի մոտեցման գիտական բնույթը. նա փորձում է ամեն ինչ ստուգել իրականության և այլ փաստաթղթերի հետ համադրումով, հանգամանք, որ մեծապես բարձրացնում է նրա կատարած ուսումնասիրությունների հավաստիությունը: Անշուշտ, իրավացի էր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Անանյանը, երբ հետևյալ տողերով է գնահատել մեր գործընկերոջ գիտական վաստակը. «Ան. Զաքարյանը չի խուսափում գիտության մարդու համար կարծես ոչ այնքան անհրաժեշտ սև աշխատանքից: Նա սիրում է փնտրել, պրպտել, հայտնաբերել նոր դեմքեր, իրադարձություններ, փաստեր ու փաստաթղթեր: Կարելի է պատկերացնել, թե արխիվային որքան փոշի է կուլ տվել, որքան պարբերականներ է թերթել՝ ուսումնասիրության թեման ամբող-

ջացնելու, գրական-հասարակական կյանքի համապատկերը ներկայացնելու համար: Թերևս «մաքուր» գիտնականների քմծիծաղը շարժող այս առավելությունը բնութագրում է հետազոտողին, պատկերացում տալիս նրա նկարագրի և աշխատանքի այլևայլ կողմերի մասին»:

Ան. Զաքարյանը հետագա տարիներին խորացավ հայ իրականության տարբեր կողմերի ուսումնասիրության մեջ, ընդլայնեց իր գիտական հետաքրքրությունների ոլորտը, զբաղվեց մինչ այդ չհետազոտված հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Այսպես, միմիայն նրա պրպտումների արդյունքում մեր հանրությունը ծանոթացավ Հովհ. Թումանյանի գլխավորած՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած վնասները քննող հանձնաժողովի գործունեությանը: Հայտնի իրողություն է, որ առաջին աշխարհամարտի տարիներին մեր ժողովուրդը կրեց մարդկային, նյութական և տարածքային վիթխարի կորուստներ: Պատերազմում դաշնակից տերությունների հաղթանակը դրական որոշակի հույսեր ներշնչեց հայությանը իր կրած վնասները ինչ-որ չափով վերականգնելու համար: Իսկ նման հնարավորություն ընձեռում էր պատերազմի ավարտից անմիջապես հետո Փարիզում հրավիրվելիք Խաղաղության կոնֆերանսը, որտեղ նախատեսվում էր քննարկել նաև պատերազմի տարիներին ժողովուրդների կրած վնասների փոխհատուցման խնդիրը: Ըստ այդմ, մեր ժողովրդի նշանավոր և ճանաչված մի շարք գավակներ, Հովհ. Թումանյանի ղեկավարությամբ, Թիֆլիսում 1918 թ. նոյեմբերի վերջին ստեղծեցին «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով», որը կարճ ժամանակահատվածում թալանված ու անօթևան հազարավոր հայերից հավաքեց, իրավական տեսքի բերեց հսկայածավալ փաստական նյութ և դրանք տրամադրեց կոնֆերանսի հայ պատվիրակությանը: Ֆինանսական միջոցների սղությունը, սակայն, հնարավորություն չտվեց հանձնաժողովին ամբողջացնել կատարած աշխատանքը: Այս ժամանակաշրջանին վերաբերող ուսումնասիրություններում Քննիչ հանձնաժողովի գործունեության մասին հատուկենտ հիշատակումներ կան. մեր ժողովրդի համար կենսական կարևորության այս հարցը հետազոտման նյութ չէր դարձել: Եվ, ահա, պատմության այդ «սպիտակ» էջը եկավ լրացնելու Ան. Զաքարյանի կազմած «Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու)» գիրքը (2005 թ.): Հրապարակված վավերագրերը, որպես սկզբնաղբյուրներ, մեզ համար ունեն ոչ միայն ճանաչողական, այլև պատմական, քաղաքական, ինչու չէ, նաև գործնական-կիրառական կարևոր նշանակություն:

Ան. Զաքարյանը հայ մամուլի պատմության քաջատեղյակ մասնագետ է, մասնավորապես փայլուն գիտի XX դարասկզբի մամուլը, դրանում տպագրված բազմաբնույթ և բազմազան նյութերը: Հենց դա էլ նպաստեց, որ նա անդրադառնա Ալեքսանդր Շիրվանզադեի 10-ական թվականների հրապարակախոսական ժառանգությանը, որը գրեթե անծանոթ էր մնացել հայ հանրությանը, և 2006 թ. հրատարակի «Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914–1919 թթ.)» աշխատանքը: Մամուլի

էջերում սփռված գրողի այդ հոդվածները հայ ժողովրդի պատմական ծանր ժամանակների ամենօրյա արձագանքներ են, պատմական փաստացի վավերագրեր, որոնք արծարծում են ազգային և քաղաքական կյանքի բազմաթիվ ու բազմապիսի հարցեր, և որոնք գրապատմական հետաքրքրություն ներկայացնելուց զատ, ունեն և արդիական հնչեղություն: Ինչպես նկատվել է, «Արդարև, Անուշավան Զաքարյանի «Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914–1919 թթ.)» խորագրյալ հատորը ուշագրավ հրատարակություն մըն է, ուր ան տարած է լուրջ աշխատանք համախմբելով և հատորի վերածելով այն բոլոր հոդվածները, որոնք լույս տեսած են ... շուրջ հարյուր տարի առաջ: Գիտական տվյալներով հիմնավորված բանասիրական հարուստ և վավերական աղբյուր մըն է հիշյալ հատորը, որ արժանի է մեր անվերապահ գնահատանքին» («Ազդակ», Բեյրութ, 3.03.2009, էջ 4):

Ան. Զաքարյանի նմանօրինակ հաջորդ աշխատանքը XX դարասկզբի հայ գրական, հասարակական, քաղաքական գործիչ Տիգրան Հովհաննիսյանի (1865–1921)՝ 1919 թ. «Հառաջ» թերթի մի շարք համարներում տպագրած և գիտական հանրությանը անծանոթ «Տաճիկ կառավարությունը և իթթիհատը մարդկության դատարանի առաջ» աշխատության կազմումն ու հրատարակության պատրաստումն էր: Այն լույս տեսավ 2007 թ.: Այս ուսումնասիրության տպագրությունը կարևորվում է նրանով, որ աշխատությունը Հայոց ցեղասպանությունը ժխտող թուրք կեղծարարների դեմ մեզանում հրատարակված եթե ոչ ամենաառաջին, ապա առաջին գործերից մեկն է: Ուսումնասիրությունը հիմնավոր, փաստարկված, մասնագիտական հմտությամբ ու խորությամբ գրված հետազոտություն է, որը մեր օրերում էլ կարող է իր նպաստը բերել Հայոց ցեղասպանության պատմական իրողության ժխտման դեմ պայքարի գործին:

Ան. Զաքարյանի գիտահետազոտական աշխատանքի կարևոր ու բաղկացուցիչ մասն է կազմում նաև հայագիտության, հայ և ռուս գրական-մշակութային, հասարակական-քաղաքական մի շարք երևելի դեմքերի (Գ. Հովսեփյան, Ստ. Մալխասյանց, Ս. Տեր-Հակոբյան, Ե. Օտյան, Պ. Մակինցյան, Կ. Միքայելյան, Լ. Լիսիցյան, Ի. Էրենբուրգ և շատ ուրիշներ) գործունեությանը վերաբերող արխիվային տարբեր բնույթի նյութերի (նամակագրություն, հուշեր, հոդվածներ և այլն) հրապարակումը՝ բովանդակալից ներածական խոսքերով ու գիտական համապատասխան ծանոթագրություններով: Ի դեպ, այս ողջ ընթացքում մեր գործընկերը նաև խմբագրել է տասնյակից ավելի գիտաքաղաքական բնույթի գրքեր:

1989-ից վերը ներկայացված աշխատանքներին զուգահեռ Ան. Զաքարյանը կատարել է դասախոսական-մանկավարժական աշխատանք Երևանի տարբեր բուհերում: Նա գիտական խորհուրդների անդամ է, եղել է թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս, զեկուցումներով հանդես եկել հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում: 1986 թ. ԽՍՀՄ, ապա Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է: Թեև ծանրաբեռնված պետական ու գիտական աշխատանքներով՝ մեր հոբելյարը կանգնած է եղել «Նախիջևան» հայրենակցական միության ստեղծման

ակունքներում, մշտապես մասնակցել է միության գործունեությանը, կազմակերպած միջոցառումներին, եղել է վարչության անդամ, փոխնախագահ:

Թերի կլիներ Ան. Զաքարյանի՝ մտավորականի և գիտությանը նվիրյալի դիմապատկերը, եթե գեթ հպանցիկ չնշվեր քաղաքացիական այն դիրքորոշումը, որ նա դրսևորեց վերջին տարիներին՝ իր մասնակցությունը բերելով մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Ան. Զաքարյանը որպես անհատ ու քաղաքացի կարողացել է վեր կանգնել առօրյա և կենցաղային հարցերից ու շահերից: Հիացմունք է առաջացնում նրա աշխատասիրությունը: Սկզբունքայնությունը, լայնախոհությունը, պահանջկոտությունը սեփական անձի և շրջապատի նկատմամբ՝ ահա այս հատկանիշներն են Ան. Զաքարյան մարդ-քաղաքացու բնութագրիչները: Այս ամենով էլ նա արժանի հարգանք ու հեղինակություն է վաստակել գիտական հասարակության, հասարակական-քաղաքական շրջանակներում և իր միջավայրում:

Սրտանց շնորհավորելով մեր գործընկեր, անվանի գրականագետ Ան. Զաքարյանի ծննդյան 55-ամյա հոբելյանը, նրան ցանկանում ենք քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, երկար տարիների կյանք և հաջողություններ՝ իր գիտական ու աշխատանքային գործունեության մեջ:

«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ»
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ